

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈԻԼ 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Տևողությունը – 2 ժամ 30 րոպե

1. Գտնել այն բոլոր կանոնավոր կոտորակների գումարը, որոնց հայտարարը փոքր է 5-ից:

- 1) 2 2) $2\frac{1}{2}$ 3) 3 4) այլ պատասխան

2. Քանի՞ եղանակով է հնարավոր 7654321 թվից ջնջել մեկ թվանշան այնպես, որ ստացված վեցանիշ թիվը բաժանվի 3-ի:

- 1) 1 2) 2 3) 3 4) 4

3. Քանի՞ տոկոսով է 100-ի 60%-ը մեծ 100-ի 40%-ից:

- 1) 20 2) $33\frac{1}{3}$ 3) 40 4) 50

4. Հեծանվորդը 20 րոպեում անցավ ճանապարհի $\frac{1}{3}$ մասը, որից հետո նրան մնաց անցնելու 4 կմ-ով ավելի ճանապարհ, քան արդեն անցել էր: Գտնել հեծանվորդի արագությունը:

- 1) 10 կմ/ժ 2) 12 կմ/ժ 3) 14 կմ/ժ 4) 15 կմ/ժ

5. Ժամը քանի՞ սն է հիմա, եթե հայտնի է, որ կեսօրից անցել է 4 անգամ քիչ ժամանակ, քան մնացել է օրվա ավարտին:

- 1) 14 անց 24 րոպե 2) 15 անց 00 րոպե 3) 16 անց 48 րոպե 4) այլ պատասխան

6. Իրար հետևից գրված են 1-ից մինչև 300 բոլոր թվերը: Ո՞ր թվանշանն է գրված

300-րդ դիրքում:

- 1) 1 2) 6 3) 3 4) այլ պատասխան

7. Ո՞ր թվանշանով է ավարտվում 100-ից փոքր բոլոր պարզ թվերի արտադրյալը:

- 1) 0 2) 2 3) 4 4) այլ պատասխան

8. Ֆուտբոլի առաջնության 4 խաղում թիմը խփել է 3 գնդակ և բաց թողեց 2 գնդակ: Յուրաքանչյուր հաղթանակի համար թիմը ստանում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1, իսկ պարտության համար՝ 0 միավոր:

Նշվածներից ո՞րը չի կարող լինել այդ թիմի հավաքած միավորների քանակը:

- 1) 6 2) 7 3) 8 4) 9

9. 5 ջուլիակը 7 օրում, օրական 10 ժամ աշխատելով, 175 մ կտավ գործեցին: Քանի՞ ջուլիակը 200մ կտավ կգործեն 5 օրում, օրական 8 ժամ աշխատելով:

- 1) 6 2) 8 3) 9 4) 10

10. Մեծ և փոքր 35 տուփում կա 510 մատիտ: Յուրաքանչյուր մեծ տուփում կա 18 մատիտ, իսկ փոքրում՝ 12: Տուփերից քանի՞սն է մեծ:

- 1) 16 2) 18 3) 20 4) այլ պատասխան

11. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ՝ 02 : 23): Օրվա ընթացքում քանի՞ անգամ է ժամացույցի ցույց տված թվանշանները համընկնում 2023 թվի թվանշանների հետ (1 հատ՝ 0, 2 հատ՝ 2, 1 հատ՝ 3):

- 1) 7 2) 8 3) 9 4) այլ պատասխան

12. 45-ից փոքր քանի՞ բնական թիվ կա, որոնցից յուրաքանչյուրը կարելի է ներկայացնել չորս տարբեր բնական թվերի արտադրյալի տեսքով:

- 1) 5 2) 4 3) 3 4) 0

13. Ամսաթիվը երբեմն գրվում է 4 թվանշանով՝ օրը և ամիսը (օրինակ հունվարի 2 կգրվի այսպես՝ 02.01): Տարին քանի՞ ամսաթիվ ունի, որոնք գրվում է միայն 0, 1, 2 թվանշաններով:

- 1) 28 2) 32 3) 35 4) 40

14. Քանի՞ քառանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի թվանշանների գումարը հավասար է 3-ի:

- 1) 6 2) 8 3) 10 4) այլ պատասխան

15. A, B, C և D կետերը ուղիղ գծի վրա նշված են ինչ-որ հերթականությամբ: Հայտնի է, որ $AC=17$, $BC=60$, $BD=27$ և $AD=70$: Գտնել AB հատվածի երկարությունը:

- 1) 43 2) 77 3) 87 4) այլ պատասխան

16. Հայրը 9 անգամ մեծ է որդուց, իսկ 1 տարի հետո 7 անգամ մեծ կլինի: Քանի՞ տարեկան է հայրը:

17. Լևոնը ընտրեց մի թիվ, այն բազմապատկեց իրենով, ստացվածից հանեց 2, արդյունքը բազմապատկեց 3-ով, հետո գումարեց 4, ապա ստացված թիվը բաժանեց 5-ի և ստացավ 29: Ի՞նչ թիվ էր ընտրել Լևոնը:

18. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 5 թվանշանը, ապա կստանանք 792-ով ավելի մեծ թիվ, քան աջից 5 կցագրելիս: Գտեք սկզբնական եռանիշ թիվը:

19. Բազմահարկ շենքի ամբողջ առաջին հարկը խանութ է: Շենքի զույգ համարի յուրաքանչյուր հարկում կա 3, իսկ կենտ համարի հարկում՝ 4 բնակարան: Ո՞ր հարկում է գտնվում 81-րդ բնակարանը:

20. Դասարանը զարդարված է կարմիր, կապույտ և սպիտակ փուչիկներով: Բոլոր փուչիկների քանակը 31 հատով շատ են քան սպիտակները, 22-ով շատ՝ քան կապույտները և 27-ով շատ՝ քան կարմիրները: Քանի՞ փուչիկով է զարդարված դասարանը: